ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՐՇԱԿ ԱՇՈՏԻ

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ (ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ)

Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2023

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Կառլեն Գագիկի Խաչատրյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Սամսոն Աշոտի Դավոյան

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Սուրեն Հակոբի Պարսյան

(գիտական աստիճանը, անուն, ազգանուն, հայրանունը)

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիա:

(անվանումը)

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2024թ.-ի հունվարի 26-ին, ժամը՝ 13:30-ին, ԵՊՀ–ում (0025, ք. Երևան, Աբովյան 52, տնտեսագիտության 015 մասնագիտական խորհրդում):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2023 թվականի դեկտեմբերի 26-ին:

015 Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Աննա Հովիկի Հակոբջանյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Պետական գնումների ինստիտուտը մեծ կարևորություն ունի: Պետությունն իր առջև դրված սոցիալական, անվտանգային, տնտեսական և քաղաքական նպատակներին հասնում է պետական գնումների արդյունավետ համակարգի միջոցով: Բնական է, որ ազատ տնտեսական հարաբերությունների պարագայում՝ աշխարհում գոյություն ունեցող որևէ պետական կառավարման համակարգ չունի և երբեք չի կարող ունենալ բավականաչափ գործիքակազմ՝ բացառապես սեփական ուժերով և միջոցներով իրագործելու իր առջև դրված նպատակները: Դրա արդյունքում առաջ է գալիս արտապատվիրակման և արդյունավետ պետական գնումների համակարգի ձևավորման անհրաժեշտությունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի առաջին տարբերակը ընդունվել է դեռևս 2000 թվականի հունիսի 5-ին, դրան հաջորդել է բազմաթիվ այլ օրենքների և իրավական ակտերի ընդունումը: ՀՀ կառավարության վերջին՝ 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգը մինչ այս պահը փոփոխությունների է ենթարկվել 17 անգամ: Այս փաստը նույնպես խոսում է պետության կողմից գնումների համակարգի կարևորությունը և կատարելագործման անհրաժեշտությունը գիտակցելու մասին, ինչպես նաև ակներև է դարձնում այն հանգամանքը, որ համակարգի կատարելագործմանն ուղղված քայլերը բավական արդյունավետ չեն:

Արդյունավետ պետական գնումների համակարգը պետք է ապահովի.

- Բարձր որակ և խնայողություններ չափորոշիչների ճիշտ համադրում: Ակնհայտ է, որ խնայողությունների բարձր մակարդակը հանգեցնելու է ցածր որակի, ուստի որքան մեծ են խնայողությունները, այնքան ցածր է գնումների որակը: Այս երկու չափանիշների միջև առերևույթ կապ կա, ուստի սա արդունավետության թերևս ամենակարևոր սկզբունքն է:
- Կայունություն, ճկունություն և հուսալիություն: Այս չափորոշիչները նույնպես փոխկապացված են: Սրանք անհրաժեշտ են համակարգը ցանկացած պահին և ցանկացած իրավիճակում կիրառելու համար՝ իմանալով, որ այն անհրաժեշտ արդյունավետություն կցուցաբերի:
- Նպատակայինություն և գնումների առաջնահերթությունների դասակարգում, որոնք սերտորեն կապված են տնտեսության զարգացման

քաղաքականության, պետական գնումների պլանավորման և ֆինանսավորման հետ:

Աշխատանքում ներկայացվում են պետական գնումների համակարգի բաց կողմերի վերհանում, վերլուծություն և առաջարկություններ՝ հաշվի առնելով մեր կողմից վավերացված միջազգային փաստաթղթերը, դրանցում ամփոփված սկզբունքները, տեղական իրավակարգավորումները և առաջարկվող լուծումների իրագործելիությունը:

Ատենախոսության նպատակները և խնդիրները:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ՀՀ պետական գնումների գործընթացը, վերհանել առկա խնդիրները և առաջարկներ ներկայացնել դրանց լուծման ուղղությամբ:

Նշված նպատակին հասնելու համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել պետական գնումների էությունը և նշանակությունը երկրի տնտեսության զարգացման համատեքստում,
- Վերլուծել պետական գնումների գործընթացի իրավական հենքը ՀՀ-ում,
- Ուսումնասիրել պետական գնումների գործընթացի կազմակերպման զարգացած երկրների փորձը,
- Վերլուծել պետական գնումների գործընթացի կազմակերպման խնդիրները ՀՀ-ում,
- Բացահայտել պետական գնումների գործընթացին մասնակցության հետ կապված հիմնական խոչընդոտները ՀՀ-ում,
- Նախանշել պետական գնումների համակարգի բարեփոխման առանցքային ուղղությունները ՀՀ-ում,
- Ներկայացնել ՀՀ պետական գնումների ընթացակարգերի կատարելագործման առաջարկներ,
- Ներկայացնել առաջարկներ պետական գնումների գործընթացի վերահսկողության մեխանիզմների բարելավման ուղղությամբ:

Ատենախոսության ուսումնասիրության օբյեկտը և առարկան:

Հետազոտության օբյեկտը Հայաստանի Հանրապետությունում պետական գնումների համակարգն է, իսկ հետազոտության առարկան՝ պետական գնումների կազմակերպման գործընթացում առկա խնդիրներն են և դրանց լուծման ուղիները:

Ատենախոսության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը: Ուսումնասիրության համար տեսական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել հայաստանյան և օտարերկրյա հեղինակների տնտեսական քաղաքականությանը, պետական գնումներին և պետական կառավարման համակարգին նվիրված աշխատությունները, պետական գնումների ոլորտը կարգավորող օրենսդրությունը: Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ վիճակագրական կոմիտեի, ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների պաշտոնական հրապարակումներն ու նյութերը, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հրապարակումները: Հետազոտության ընթացքում կիրառվել են տնտեսավիճակագրական, համեմատական վերլուծության, համակարգային և գործոնային վերլուծության մեթոդները:

Ատենախոսության գիտական նորույթը: Աշխատանքում իրականացված հետազոտության և վերլուծությունների հիման վրա ստացվել են տեսական և կիրառական բովանդակության գիտական արդյունքներ, որոնցից գիտական նորույթ են հանդիսանում հետևյալները.

1. Պետական գնումների գործընթացի տեսանկյունից աութսորսինգի էության բացահայտման և համակողմանի վերլուծության արդյունքում վեր են հանվել աութսորսինգային քաղաքականության արդյունավետ իրականացման հիմնական սկզբունքները, որոնք հաշվի առնելով պետությունը կարող է արտապատվիրակվող ծառայությունների ձեռքբերման ռիսկերը էականորեն նվազեցնել:

2. ՀՀ գնումների համակարգում առկա խնդիրների լուծման նպատակով մշակվել են գնումների օրենսդրության փոփոխության առաջարկներ:

3. ՀՀ պետական գնումների համակարգի վերահսկողական մեխանիզմների համակողմանի ուսումնասիրման արդյունքում մշակվել են վերահսկողական մեխանիզմների կատարելագործման համալիր կառուցակարգեր:

4. Իրականացվել է ՀՀ պետական գնումների մասին օրենսդրությամբ նախատեսված գնման մրցութային ընթացակարգերի արդյունավետության վերլուծություն, մշակվել է գնման մրցութային ընթացակարգերի արդյունավետության հաշվարկման մեթոդոլոգիական նոր մոտեցում և դրա հիման վրա կատարված հաշվարկների միջոցով բացահայտվել են գնման ընթացակարգերի առավելություններն ու թերությունները:

Աշխատանքի գործնական նշանակությունը:

Պետական գնումների կատարելագործման վերաբերյալ առաջարկությունները կարող են օգտագործվել ՀՀ օրենսդիր և գործադիր մարմինների կողմից պետական գնումների գործընթացի պլանավորման, կազմակերպման, վերահսկման մեխանիզմների կատարելագործման ուղղությամբ: Ստացված արդյունքները կարող են օգտակար լինել ինչպես ոլորտի պետական պաշտոնյաների, այնպես էլ նշված խնդիրներով զբաղվող հետազոտողների համար:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:

Ատենախոսության հիմնական արդյունքները քննարկվել են Երևանի պետական համալսարանի կառավարման և գործարարության ամբիոնում: Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակված են 6 գիտական հոդվածներում:

Ատենախոսության ծավալը և կառուցվածքը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության տեքստը շարադրված է 152 էջի վրա:

Ատենախոսության առաջին գլխում՝ «Պետական գնումների գործընթացի կազմակերպման տեսամեթոդական հիմքերը», անդրադարձ է կատարվում տնտեսական զարգացման գործում պետական գնումների էությանը և դերին, միջազգային փորձի և ՀՀ պետական գնումների վերլուծության արդյունքում բացահայտվում են աութսորսինգային քաղաքականության լավագույն մոտեցումները, պետական գնումների՝ պետության ՀՆԱ մեջ ունեցած հատկանշանական դերին, ՓՄՁ խրախուսող միջոցառումների կիրառման միջազգային մոտեցումներին և պետական գնումների գործընթացի կազմակերպման օրենսդրաիրավական կարգավորումներին ու դրանց էվոլյուցիային ՀՀ-ում:

Գծապատկեր 1. 2 Հանրային հատվածի աութսորսինգի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում (%) [1]



Այստեղ շեշտադրվում է, որ մասնավոր հատվածին կատարված պատվիրակումները, ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմեր ունեն: Դրանք պետության կողմից վարձված աշխատակիցներից հրաժարվելուց և այդպիսով խնայողություններ նախատեսելուց բացի, կարող են թուլացնել պետական կառավարման համակարգի ինքնուրույնությունը և հետևաբար թուլացնելով տնտեսության մեջ ունեցած դիրքերը՝ կախյալ դարձնել մասնավոր ընկերություններից, ինչպես նաև արտաքին ուժերից: Հաշվի առնելով այս ամենը, ՀՀ-ում գործող խառը տնտեսության պայմաններում նպատակահարմար աութսորսինգի տեսակ և աութսորսինգային քաղաքականություն որդեգրելու լավագույն մոտեցում կարող է ձևավորվել, եթե հաշվի առնվեն հետևյալ սկզբունքները.

1. պետության կողմից բյուջեի հաշվին տվյալ գործառույթի իրագործումն ավելի թանկ է և/կամ ժամանակատար,
2. տվյալ գործունեության պատվիրակումը ազգային անվտանգությանը և պաշտպանությանը վերաբերող, զգայուն տեղեկատվության արտահոսքի ռիսկեր չի պարունակում,

[1] Panu Poutvaara, Henrik Jordahl, Public sector outsourcing, IZA world of labour: Հղումը՝ «https://wol.iza.org/articles/public-sector-outsourcing/long»

3. տվյալ գործունեությունը մասնավոր ընկերությունների կողմից կարող է ավելի բաձր մակարդակով իրագործվել,

4. տնտեսական գործունեության տվյալ ոլորտում հավելյալ աշխուժություն մտցնելու կարիք կա:

5. տվյալ գործունեության ձեռքբերումն իրականացվելու է արդյունավետ գնման ընթացակարգեր կիրառելու միջոցով:

Բազմաթիվ ուսումնասիրությունների ընդհանուր եզրակացությունն այն է, որ աութսորսինգը նվազեցնում է հանրային ծառայությունների մեծ մասի ծախսերը, թեև խնայողությունների չափը հստակ չէ: Հիմնականում հենվելով Արդյունաբերության հանձնաժողովի[2] (1996) ավստրալական վերլուծական ուսումնասիրության վրա՝ Դոմբերգերը և Ջենսենը[3] (1997 թ.) եզրակացնում են, որ աութսորսինգը կարող է 20%-ի չափով խնայողություններ ապահովել՝ առանց ծառայությունների որակի զոհաբերության: Գրաութը և Սթիվենսը[4] (2003թ.) հաստատում են, որ մրցակցային մրցույթների կիրառությունը նվազեցրել է մի քանի ծառայությունների ծախսերը, մասնավորապես՝ աղբահանության և լվացքատների կողմից մատուցվող ծառայությունները: Ջենսենը և Սքոթենքեշը[5] (2005թ.) նույն կերպ եզրակացնում են, որ աութսորսինգը նվազեցնում է պետական ծախսերը, թեև որոշ հանգամանքներում դա կարող է մասամբ պայմանավորված լինել ծառայությունների որակի նվազեցմամբ:[6]

ՀՀ պետական գնումների համակարգը պարզ և ուղիղ գնումներից ժամանակի ընթացքում անցում է կատարել կենտրոնացված կարգով, ապա ապակենտրոնացված և էլեկտրոնային հաղորդակցման միջոցների կիրառմամբ գնումների, իսկ հետո գնման ընթացակարգերի տարբեր ձևերի և

---

[2] Industry Commission, Competitive Tendering and Contracting by Public Sector Agencies. Report 48, Australian Government Publishing Service, Melbourne, 1996: Հղում մը՝ « https://www.pc.gov.au/inquiries/completed/public-service-tenders-contracts/48ctcpsa.pdf»:

[3] Domberger S., Jensen P. H., Contracting out by the Public Sector: Theory, Evidence, Prospects, Oxford Review of Economic Policy 13, pages 67–78: Հղում մը՝ « https://www.researchgate.net/publication/5216019_Contracting_Out_by_The_Public_Sector_Theory_Evidence_Prospect »

[4] Grout P. A., Stevens M., The Assessment: Financing and Managing Public Services, Oxford Review of Economic Policy 19, 2003, pages 215–234: Հղում մը՝ «https://www.researchgate.net/publication/5216194_The_Assessment_Financing_and_Managing_Public_Services »:

[5] Jensen P. H., Stonecash R. E., Incentives and the Efficiency of Public Sector-Outsourcing Contracts, Journal of Economic Surveys 19, 2005, pages 767–787: Հղում մը՝ « https://www.researchgate.net/publication/4764981_Incentives_and_the_Efficiency_of_Public_Sector_Outsourcing_Contracts »:

[6] Fredrik Andersson, Henrik Jordahl, Jens Josephson, Outsourcing Public Services: Contractibility, Cost, and Quality, CESifo Economic Studies, Volume 65, Issue 4, 2019, Pages 349–372: Հղում մը՝ «https://academic.oup.com/cesifo/article/65/4/349/5518997»:

տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման շնորհիվ ստեղծվել է այս պահին գործող պետական գնումների միասնական համակարգը: Ներկայումս գնումների էլեկտրոնային համակարգը հնացած է այնպես, ինչպես հնացած են դրա առաջարկած լուծումները, ուստի պետական գնումների համակարգի զարգացումը փոխկապակցված է տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման և դրա առաջարկած լուծումների հետ: Մեր կարծիքով ՀՀ պետական գնումների հետագա արդյունավետությունը կապահովվի ֆունկցիոնալ, այլ համակարգերի հետ ինտեգրված, կիրառելի, միասնական, հասանելի և արդյունավետ գնումների էլեկտրոնային համակարգի ստեղծմամբ և գործարկմամբ: Որոշ շրջանակներում քննարկվող պետական գնումների կենտրոնացված համակարգին հետանցում կատարելը, մեր դիտարկմամբ անընդունելի է, քանի որ այդ մոդելը նախկինում արդեն փորձարկվել, կիրառվել և չի լուծել իր առջև դրված խնդիրները՝ ինչպես ծանրաբեռնվածության, այնպես էլ անարդյունավետության պատճառով: Պետական գնումների կենտրոնացված կամ ապակենտրոն մոդելները, մեծ հաշվով, այնքան կարևորելի չեն, որքան գնման ընթացակարգերի ինովացման միջոցառումները և ավտոմատացումը: Մեր դիտարկմամբ և օրենսդրահիրավական կարգավորումների էվոլյուցիայի վերլուծությամբ՝ պետական գնումների արդիականացումը փոխկապակցված է ավտոմատացման և մարդկային գործոնի նվազեցման հետ:

Ատենախոսության երկրորդ գլխում՝ «Պետական գնումների համակարգի գործնական դրսևորումները և խնդիրները», ուսումնասիրվել են ՀՀ կողմից վավերացված միջազգային փաստաթղթերը, վերջիններիս սկզբունքներն ու նպատակները, բերվում են ուշադրության արժանի օրինակներ, անդրադարձ է կատարվում զարգացած երկրների կողմից իրականացվող քաղաքականությանը, առանձնացվել են կարևորագույն գործոնները: Առաջին գլխում վերլուծվել են այնպիսի երկրների պետական գնումների համակարգեր, ինչպիսիք են Գերմանիան, Ճապոնիան, Չինաստանը, Ավստրալիան, ԱՄՆ-ն, ՌԴ-ն և այլն: Միջազգային փորձի ուսումնասիրությամբ ցույց է տրվել այն չափորոշիչները, որոնք հաշվի առնելով շատ երկրների պետական գնումների համակարգերը կառուցվում և զարգանում են:

Գծապատկեր 2.1 Փոքր և միջին ձեռնարկություններին հատկացված պայմանագրերի տոկոսային հարաբերակցությունը Ավստրալիայում՝ 2016-ից 2022 թվականներին. [7]



ՀՀ-ում գործող, ինչպես նաև արտասահմանյան գրեթե բոլոր երկրներում իրականացվող պետական գնումների հիմնական չափանիշներն են.

1. թափանցիկությունը (transparency)՝ գնումների մասին բաց և հասանելի տեղեկավություն,
2. հաշվետվողականությունը և ընթացակարգերի պահպանումը (accountability and duprocess)՝ ընթացակարգերի հստակ պահպանում պետական և հասարակական հսկողության ներքո,
3. բաց և արդյունավետ մրցակցությունը (open and effective competition)՝ կողմնապահության բացառում,
4. արդարությունը (fairness)՝ գնումների բոլոր մասնակիցների համար հավասար պայմաններ:[8]

Պետական գնումների օրենսդրական կարգավորումները տարբեր երկրներում մշակված են տվալ երկրի տնտեսական կյանքին ու առանձնահատկություններին ներհատուկ ձևերով: Այս կամ այն երկրում պետական գնումների համակարգը ձևավորված է տնտեսական

[7] Statistics on Australian Government Procurement Contracts, Australian Government Departement Of Finance: Հղու մը՝ « https://www.finance.gov.au/government/procurement/statistics-australian-government-procurement-contracts- »:

[8] Светлана Белова , Госзакупки за рубежом: общее и особенное, ИТ-бизнес, Регулярный выпуск №6 (299), 2008, հղու մը՝ « https://www.novostiitkanala.ru/numbers/reg-numbers/detail.php?ID=18960 »:

նախասիրությունների, կարևորությունների, առանձնահատկությունների, նրբությունների հիման վրա: Կարգավորումները իրականացվում են բազային չափանիշների հիման վրա՝ պետության կամ պետական որևէ մարմնի կողմից ընդունված օրենքների կամ ենթաօրենսդրական իրավական ակտերի ընդունմամբ: Այնուամենայնիվ, դրանք ընդհանրական չափանիշներ ունեն, որոնք սահմանված են միջազգային մի շարք փաստաթղթերում: Դրանցից են, օրինակ, Եվրամիության, Միջազգային առևտրային կազմակերպության, Միացյալ ազգերի կազմակերպության, Ասիա-խաղաղօվկիանոսյան տնտեսական համագործակցության կազմակերպության և այլ կազմակերպությունների կողմից ընդունված, որոշ դեպքերում պարտադիր բնույթ կրող փաստաթղթերով:

Երկրորդ գլխում ՀՀ պետական գնումների ընթացակարգը պրակտիկ առումներով ուսումնասիրելու համար այն դիտարկվել է երկու դիտակետից՝ պատվիրատուի և մասնակցի: Մի դեպքում անդրադարձ է կատարվել գնման գործընթացի շրջանակներում իրականացվող դերերի բաժանմանը, գնահատող հանձնաժողովների կազմավորմանը և վերջիններիս գործունեությանը, գնումների պատշաճ պլանավորմանը, գնումների պլանների դերին և դրանց բովանդակային նշանակությանը, գնման ընթացակարգերի ընտրությանը, ընթացակարգերի հրավերների՝ ներառյալ ռուսերեն լեզվով, ավտոմատացման անհրաժեշտությանը, առանձնացվել են այն դեպքերը, որոնք տանում են մասնակիցների կողմից ներկայացված հայտերի շտկման, առաջարկվել է նաև դրանց ավտոմատացում կիրառել, առաջարկվել է բացառել թղթային ձևով իրականացվող գնման գործընթացները, ընդգծվել է պայմանագրերի արդյունքների հանձնման-ընդունման փուլում լրացուցիչ մեխանիզմների ներդրման անհրաժեշտությունը:

Մասնակցի դիտակետից կատարված ուսումնասիրության արդյունքում գնման գործընթացների մասնակիցներին բաժանել ենք երկու խմբի՝ հաշվի առնելով դրանց պետական գնումներին մասնակցելու շարժառիթները, կատարվել է նաև վերջիններիս վերլուծություն, ընդգծվել է մասնակիցների դասակարգում ապահովելու անհրաժեշտությունը, ինչը ներկայումս չի իրականացվում: Այս դրվագում անդրադարձ է կատարվել նաև մինչև բանակցությունները կամ բանակցությունների ընթացքում մասնակիցների՝ միմյանց հետ հակամրցակցային համաձայնություն ձեռք բերելու հնարավորությանը, ինչպես նաև մասնակիցների՝ գնման գործընթացներում ունեցած խոչընդոտներին:

Ատենախոսության երրորդ գլխում՝ «Պետական գնումների գործընթացի կատարելագործման ուղիները Հայաստանի

Հանրապետությունում», քննարկվում են ՀՀ-ում պետական գնումների համակարգի բարեփոխման հիմնական ուղղությունները, անդրադարձ է կատարվում էլեկտրոնային գնումների համակարգի բարեփոխման անհրաժեշտությանը, գնման առարկաների տեխնիկական բնութագրերին, գնման ընթացակարգերի խրթինությանը, թղթային ձևով իրականացվող գնումներին և գնումների համակարգման մարդկային գործոնին: Մյուս կարևոր հարցը վերաբերում է մասնակիցների ներգրավման և մասնակիցների թվի մեծացման միջոցով գնման ընթացակարգերն ավելի արդյունավետ և շահավետ դարձնելուն, որի համատեքստում անդրադարձ է կատարվել նաև այլ հեղինակների կողմից կատարված ուսումնասիրություններին: Մեր ուշադրությունից չի վրիպել նաև պետական գնումների գործընթացի վերահսկողության կատարելագործման ուղիների ու դրա կարևորության փնտրտուքը, վերահսկողական գործընթացի բացահայտումն ու ընդգծումը: Հիմնավորվել են ՀՀ պետական գնումների համակարգի վերահսկողական մեխանիզմներում առկա խնդիրները և առաջարկներ ներկայացվել վերահսկողական մեխանիզմների կատարելագործման ուղղությամբ: Այս նպատակին հասնելու համար՝ գնման գործընթացը վերահսկողության ենթարկելու տեսանկյունից, իրականացվել է փուլ առ փուլ և մանրամասն վերլուծություն, ընդգծվել են գնման գործընթացի բոլոր այն կարևոր դրվագները, որոնց անհրաժեշտ է ուշադրություն դարձնել: Վերահսկողական տեսանկյունից գնման գործընթացների վերլուծությամբ անդրադարձ է կատարվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակին (սև ցուցակ), լրագրողների կողմից տարվող աշխատանքներին, հանրային հսկողությանը, ստուգող լիազորություններ ունեցող պետական մարմինների գործունեությանը և վերահսկողություն իրականացնելու երկու մեթոդներին, առանձանցվել են այն անհամապատասխանությունները կամ բացասական երևույթները, որոնք առաջարկվող մոտեցմամբ կարող են վեր հանվել: Վերջինի շրջանակում հատկանշական դրվագների ընդգծումը հիմնավորվել է նաև գնումների մասին օրենդրության մեջբերումներով:

Երրորդ գլխում քննարկվում է նաև այնպիսի օրենսդրական փոփոխություններ նախաձեռնելու անհրաժեշտությունը, որոնք վերաբերում են գնանշման հարցման ձևով իրականացվող ընթացակարգերի բովանդակային նշանակությանը, Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գնումներ կատարելու գործընթացի հետ կապված լրացուցիչ մեխանիզմներ կիրառելուն, գնման առարկաների նախահաշվային գների ձևավորման մեխանիզմի

ներդրմանը, գնահատող հանձնաժողովների ձևավորման դեպքերի և դրանց նպատակահարմարության հարցը քննելու անհրաժեշտությանը:

Այս գլխում իրականացվել է գնման ընթացակարգերի արդյունավետության վերլուծություն՝ հիմնված «armeps.am» կայքից արտահանված վիճակագրական տվյալների վրա: Ամփոփելով մրցութային ընթացակարգեր համարվող գնանշման հարցման, էլեկտրոնային աճուրդի և բաց մրցույթի արդյունավետության վերլուծությունը՝ մեր կողմից կիրառվել է ընթացակարգերի արդյունավետության վերլուծության մեթոդոլոգիական նոր մոտեցում, որն իրենից ենթադրում է ձեռքբերված գնման առարկաների ընդհանուր նախահաշվային գների և ընդհանուր պայմանագրային գների տարբերության (հաշվարկային տնտեսման), ինչպես նաև գնման ընթացակարգերի մասնակիցների միջինացված ցուցանիշի և հաշվարկային տնտեսման ցուցանիշի համեմատական, որի արդյունքում յուրաքանչյուր գնման ընթացակարգի մասով ստացել ենք մեկ թվով արտահայտված արդյունավետության ցուցանիշ՝ հետևյալ կերպ.

$$ԱՑ = ՀՏՄՑ / ՄՄԹ,$$

որտեղ ԱՑ–ն յուրաքանչյուր ընթացակարգի մեկ թվով արտահայտված արդյունավետության ցուցանիշն է, որն ինչքան բարձր է, այնքան գնման ընթացակարգն ավելի արդյունավետ է,

ՀՏՄՑ-ն դիտարկվող ժամանակահատվածում տոկոսային արտահայտությամբ հաշվարկային տնտեսման միջինացված ցուցանիշն է, որն իրենից ներկայացնում է տվյալ ընթացակարգի կիրառմամբ ձեռքբերված գնման առարկաների ընդհանուր նախահաշվային գների և ընդհանուր պայմանագրային գների տարբերությունը,

ՄՄԹ-ն դիտարկվող ժամանակահատվածում կազմակերպված գնման ընթացակարգերի բոլոր չափաբաժինների մասնակիցների միջինացված թվաքանակն է:

Աղյուսակ 3. 9 Գնանշման հարցման, էլեկտրոնային աճուրդի և բաց մրցույթի 2018-2022 թվականների ամփոփ փվյալները՝ ըստ «armeps» էլեկտրոնային համակարգի վիճակագրության.

Հ/Հ	Գնման ընթացակարգի տեսակ	Մասնակիցների միջինացված թվաքանակը 2018-2022 թվականներին, (մասնակիցների միջին թվաքանակ՝ մեկ չափաբաժնում)	Ընթացակարգի ապահովված հաշվարկային տնտեսման միջինացված ցուցանիշը 2018-2022 թվականներին (տոկոս)	Հաշվարկային տնտեսում/ Մասնակիցների միջին թվաքանակ Հարաբերակցությունը
1	Գնանշման հարցում	4.11	24.41	5.93
2	Բաց մրցույթ	7.9	22.56	2.85
3	Էլեկտրոնային աճուրդ	3.2	20.31	6.34

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2019 թվականից սկսած գնանշման հարցման ձևով իրականացվող գնման ընթացակարգերի մասնակիցների միջինացված ցուցանիշը նվազում է և մոտավորապես համընկնում է դրա հաշվարկային տնտեսման ցուցանիշի նվազման հետ, իսկ բաց մրցույթների կիրառմամբ գնումների չափը դրամային արտահայտությամբ աճ է գրանցում, սակայն ուղեկցվում է մասնակցության դեպքերի և մինչև 2021 թվականը՝ հաշվարկային տնտեսման նվազեցման միտումով, կարծում ենք, որ գնանշման հարցումը և բաց մրցույթը ժամանակի ընթացքում պետք է վերածվեն ավելի ավտոմատացված տարբերակների և գնալով նմանվեն էլեկտրոնային աճուրդին:

Աճող մրցակցության և ծախսերի մեծացման լույսի ներքո՝ գնումների և մատակարարման կառավարման (PSM) թվայնացումը կազմակերպությունների համար հանդիսանում է հիմնական ներդրումային առաջնահերթություն, քանի որ այս ոլորտը հակված է հետ մնալ այլ բիզնես գործառույթներից: Այդ իսկ պատճառով առաջադեմ թվային տեխնոլոգիան՝ «Robotic Process Automation (RPA)»-ը ավելի ու ավելի է կիրառվում գնումների գործընթացների վերանախագծման, օպտիմալացման և ավտոմատացման համար: Այս

տեխնոլոգիան բաղկացած է ծրագրային լիցենզիաներից (այսպես կոչված բոտերից), որոնք ընդօրինակում են մարդու վարքագիծը և գործողությունները:[9]

Եզրակացություններում հայեցակագերի տեսքով ի մի է բերված ատենախոսության ողջ շարադրանքը: Ուսումնասիրության ընդհանրացման արդյունքում մշակված եզրակացությունների համառոտ ձևակերպումներն են.

1. Խառը տնտեսության պայմաններում աութսորսինգային քաղաքականության որդեգրման լավագույն մոտեցում ձևավորելու նպատակով սկզբունքներ են առանձնացվել,
2. ՓՄՁ խրախուսող միջոցառումները ՀՀ-ում պետք է շարունակական բնույթ կրեն՝ հիմնվելով միջազգային փորձի և առկա վիճակի վերլուծությունների վրա: Մեր երկրում առանձնակի ուշադրության և զարգացման կարիք ունեն, հատկապես, ՓՄՁ-ների համար շահութաբեր գնումների ապահովումը, տնտեսական հանցագործության դեմ արդյունավետ պայքարը և պետական գնումների վերաբերյալ հավաստի տվյալների ապահովումը:
3. Պետական գնումների կենտրոնացված կամ ապակենտրոն մոդելները, մեծ հաշվով, այնքան էական չեն, որքան գնման ընթացակարգերի նորարական մոտեցումները և ավտոմատացումը: Օրենսդրահիրավական կարգավորումների էվոլյուցիայի վերլուծությունը ցույց է տալիս, որ պետական գնումների արդիականացումը փոխկապակցված է ավտոմատացման և մարդկային գործոնի նվազեցման հետ:
4. ՀՀ-ում տեղեկատվական տեխնոլոգիաների բուռն առաջընթացի պայմաններում, պետական գնումների արդյունավետ էլեկտրոնային համակարգ ունենալն անհրաժեշտություն է, ուստի մեր կողմից կատարված ուսումնասիրության արդյունքում շեշտադրվել են այն բոլոր գործընթացները, որոնց պարագայում կարելի է ավտոմատացում կիրառել,
5. Համաշխարհային փորձի ուսումնասիրությամբ ցույց են տրվել այն հիմնական չափորոշիչները, որոնք հաշվի առնելով շատ երկրների պետական գնումների համակարգերը զարգանում են,
6. ՀՀ գնումների համակարգում առկա խնդիրների լուծման նպատակով առաջարկվում են իրականացնել գնումների օրենսդրության մի շարք փոփոխություններ,
7. Առանց պարբերական կերպով գործող կայուն վերահսկողական մեխանիզմների ՀՀ-ում պետական գնումների ինստիտուտը խոցելի է, իսկ պատվիրատու-մասնակիցներ շփման շրջանակում մշտապես չարաշահումների

[9] Christian Flechsig, Franziska Anslinger, Rainer Lasch, Robotic Process Automation in purchasing and supply management: Amultiple case study on potentials, barriers, and implementation, Journal of Purchasing and Supply Management Volume 28, Issue 1, Elsevier, 2022, page 1: Հղումը՝ « https://www.sciencedirect.com/science/article/pii/S1478409221000522 »:

ռիսկեր կարող են ի հայտ գալ: Ժամանակակից էլեկտրոնային ավտոմատացված համակարգերի կիրառմամբ և տվյալների վերլուծության օգտագործման միջոցով ռիսկայնության գնահատականի ենթարկված ընթացակարգերը նույնպես կարող են դասակարգվել: Այսպիսի մեխանիզմների ներդրման ճանապարհով և քիչ վերահսկողական ռեսուրսների ներգրավմամբ կարելի է հասնել բարձր վերահսկողական արդյունքների:

8. Պետական գնումներում տարվող քաղաքականությամբ անհրաժեշտ է գործարար շրջանակներին՝ շահույթ հետապնդելուց բացի, պետության կարիքների մասին հոգ տանելու մոտեցում ձևավորել: Գործարար միջավայրում նման քաղաքականության շարունակականությունը, ի վերջո, կհանգեցնի բիզնես միջավայրի բարելավմանը, իսկ պետությանը՝ պահանջողի և ստիպողի դեր կատարելուց բացի՝ կվերածի գործընկերոջ, ում բարօրությունը նույնպես պետք է հաշվի առնել:

9. Մեր կողմից մշակված նոր մեթոդոլոգիական մոտեցմամբ կատարված վերլուծության արդյունքում հանգել ենք այն եզրակացությանը, որ բաց մրցույթը դեռևս մնում է ամենաշատ թվով մասնակիցներ ներգրավող ընթացակարգը, գնանշման հարցումը՝ ամենաշատ հաշվարկային տնտեսման ցուցանիշներ ապահովող ընթացակարգը, իսկ էլեկտրոնային աճուրդը չնայած նրան, որ երկար ժամանակ խափանված էր, ունի հաշվարկային տնտեսման և մասնակիցների միջինացված թվաքանակի հարաբերակցության ցուցանիշի (ԱՑ) ամենաբարձր մակարդակը և արդեն գերազանցում է բաց մրցույթին ու գնանշման հարցմանը: Մեր կողմից կիրառված նոր մեթոդոլոգիական վերլուծության համաձայն էլեկտրոնային աճուրդը վերջին 5 տարիներին ամենաարդյունավետ գնման ընթացակարգն է:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետյալ հոդվածներում.

1. Արշակ Ներսիսյան, «ՀՀ պետական գնումների վերահսկողության մեթոդական հարցերի շուրջ», «Բանբեր Երևանի համալսարանի. տնտեսագիտություն», 2021. № 1., էջ 30-36,

2. Արշակ Ներսիսյան, «Մի քանի դիտարկումներ ՀՀ պետական գնումների համակարգի վերաբերյալ», «Զորավար Սեպուհ» պատմաքաղաքական վերլուծական կենտրոնի «Պատմություն և քաղաքականություն» գիտական հանդես 2(13), 2021, էջ 69-73,

3. Արշակ Ներսիսյան, «Պետական գնումների ինստիտուցիոնալ համակարգը տարբեր երկրներում. միջազգային փորձի վերլուծությունը» «Զորավար Սեպուհ» պատմաքաղաքական վերլուծական կենտրոնի «Պատմություն և քաղաքականություն» գիտական հանդես 6(17), 2021, էջ 134-139,

4. Arshak Nersisyan, "Analysis of some positive and negative aspects of RA public procurement", International Accountancy Training Center, "Finance and accounting 2(8)", 2021, էջ 152-157,

5. Արշակ Ներսիսյան, «ՀՀ պետական գնումների վերահսկողական խնդիրների վերլուծություն», «Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու», 2022 – 2(28), էջ 217-222,

6. Արշակ Ներիսյան, «Գնումների ընթացակարգի պրակտիկ կիրառությունը պատվիրատուի տեսանկյունից. պրակտիկայում հանդիպող բացթողումների և դրական կողմերի վերլուծություն», «Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու», 2022 – 2(27), էջ 325-335:

Аршак Нерсисян Ашотович

ПУТИ СОВЕРШЕНСТВОВАНИЯ СИСТЕМЫ ГОСУДАРСТВЕННЫХ ЗАКУПОК (НА ПРИМЕРЕ РА)

«Ը.00.02» - Дисертация на соискание ученой степени кандидата экономических наук по специальности "экономика и управление отдельных сфер экономики"

РЕЗЮМЕ

В диссертации исследуется одна из постоянно актуальных тем в системе государственного управления – система государственных закупок. Расходная часть государственного бюджета является его неотъемлемой составляющей, поэтому работы, связанные с системой государственных закупок, обычно не устарели. Тщательно проанализированные и тщательно реализованные реформы в этой сфере могут обеспечить экономию и эффективность государственного бюджета. Даже в странах с наиболее развитой экономикой и системами государственного управления осуществляется постоянный мониторинг и совершенствование процесса государственных закупок. В работе анализируются проблемы, связанные с государственными закупками, которые возникают как из практического применения, так и носят методический характер.

В работе речь идет о таких эпизодах и пробелах, связанных с системой государственных закупок, которые обсуждались и обсуждаются людьми, интересующимися институтом государственных закупок, его совершенствованием и инновациями, как раньше, так и сейчас.

Цели и задачи диссертации – изучить процесс государственных закупок РА, выделить существующие проблемы и представить предложения по их решению. Для достижения заявленной цели в работе были поставлены и решены следующие задачи:

- Изучить сущность и значение государственных закупок в контексте экономического развития страны,
- Проанализировать правовую основу процесса государственных закупок в РА,
- Изучить опыт развитых стран в организации процесса государственных закупок,
- Проанализировать проблемы организации процесса государственных закупок в РА,
- Определить основные препятствия, связанные с участием в процессе государственных закупок в РА,

- Определить ключевые направления реформы системы государственных закупок в РА,
- Внести предложения по совершенствованию процедур государственных закупок РА,
- Внести предложения по совершенствованию механизмов контроля процесса государственных закупок.

Объект исследования: Объектом исследования является система государственных закупок в Республике Армения, а предметом исследования – существующие проблемы в процессе организации государственных закупок и пути их решения.

Научная новизна диссертации: На основе проведенных в работе исследований и анализов получены научные результаты теоретического и прикладного содержания, из которых научной новизной являются:

1. В результате раскрытия сущности аутсорсинга с точки зрения процесса государственных закупок и комплексного анализа выделены основные принципы эффективной реализации политики аутсорсинга, учет которых позволет существенно снизить риски приобретения аутсорсинговых услуг,
2. В целях решения существующих проблем в системе закупок РА разработаны предложения по внесению изменений в законодательство о закупках,
3. В результате всестороннего исследования механизмов надзора системы государственных закупок РА были разработаны комплексные структуры совершенствования механизмов надзора,
4. Проведен анализ эффективности тендерных процедур закупок, предусмотренных законодательством о государственных закупках РА, разработан новый методический подход к расчету эффективности тендерных процедур закупок и посредством расчетов выявлены преимущества и недостатки закупочных процедур.

ARSHAK NERSISYAN

WAYS TO IMPROVE THE PUBLIC PROCUREMENT SYSTEM

(BY EXAMPLE OF RA)

"Ը.00.02" - Dissertation for the academic degree of Candidate of Economic Sciences in the specialty "Economics and management of certain areas of the economy"

SUMMARY

The dissertation examines one of the constantly relevant topics in the public administration system – the public procurement system. The expenditure part of the state budget is its integral component, therefore the work related to the public procurement system is usually not outdated. Carefully analyzed and carefully implemented reforms in this area can ensure savings and efficiency in the state budget. Even in countries with the most developed economies and public administration systems, the public procurement process is constantly monitored and improved. The work analyzes the problems associated with public procurement, which arise both from practical application and are of a methodological nature.

The work deals with such episodes and gaps related to the public procurement system, which have been and are being discussed by people interested in the institution of public procurement, its improvement and innovation.

The goals and objectives of the dissertation are to study the public procurement process of the Republic of Armenia, highlight existing problems and present proposals for solving them. To achieve the stated goal, the following tasks were set and solved:

- Study the essence and significance of public procurement in the context of the country's economic development,
- Analyze the legal basis of the public procurement process in the Republic of Armenia,
- Study the experience of developed countries in organizing the public procurement process,
- Analyze the problems of organizing the public procurement process in the Republic of Armenia,
- Identify the main obstacles associated with participation in the public procurement process in the Republic of Armenia,
- Identify key areas of reform of the public procurement system in the Republic of Armenia,
- Make proposals to improve the RA public procurement procedures,

- Make proposals to improve mechanisms for monitoring the public procurement process.

Object of the research: The object of the research is the public procurement system in Republic of Armenia, and the subject of the study is the existing problems in the process of organizing public procurement and ways to solve them.

Scientific novelty of the dissertation: Based on the research and analysis carried out in the work, scientific results of theoretical and applied content were obtained, of which the scientific novelty are:

1. As a result of revealing the essence of outsourcing from the point of view of the public procurement process and a comprehensive analysis, the basic principles of effective implementation of outsourcing policy have been identified, taking into account which will significantly reduce the risks of purchasing outsourcing services,
2. In order to solve existing problems in the RA procurement system, proposals have been developed to amend the procurement legislation,
3. As a result of a comprehensive study of the supervision mechanisms of the public procurement system of the Republic of Armenia, comprehensive structures for improving supervision mechanisms were developed,
4. An analysis of the effectiveness of tender procurement procedures provided by the legislation on public procurement of the Republic of Armenia was carried out, there was developed a new methodological approach to calculating the effectiveness of tender procurement procedures and, through calculations, the advantages and disadvantages of procurement procedures were identified.